ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՎ/15/2022

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ ԿՎ/15/2022 ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «22» հուլիսի 2022թ.

Կոռուպցիայի կանխարգելման Հանձնաժողովը, կազմով՝ Հայկուհի Հարությունյանի, Արամայիս Փաշինյանի, Նարեկ Համբարձումյանի և Մարիամ Գալստյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Տիգրան Վազգենի Սահակյանի կողմից հայտարարագրման ենթակա տվյալները «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրում ոչ ամբողջական ներկայացնելու փաստի առթիվ 2022 թվականի մայիսի 25-ի N ՎԻՎ 19/2022 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի հիմքով հարուցված 2022 թվականի մայիսի 25-ի N ԿՎ/15/2022 կարգապահական վարույթի նյութերը.

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

Կարգապահական վարույթ հարուցելու առիթ են հանդիսացել 2020 թվականի մարտի 25-ին ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-199-Ն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածով սահմանված կարգով, Հանձնաժողովի կողմից իրականացված դատավորների հայտարարագրերի վերլուծության արդյունքում հայտնաբերված խախտումները: Մասնավորապես, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Տիգրան Սահակյանը 2021 թվականի մայիսի 31-ին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրի՝ (այսուհետ՝ Հայտարարագիր)՝

1. «Բ.1.2 «Տվյալ տարվա ընթացքում ձեռք բերված և օտարված անշարժ գույքը» բաժնում, հայտարարագրել է [redacted] հասցեում գտնվող բնակելի տան 249,106,000.00 ՀՀ դրամ արժեքով օտարման մասին տվյալ, մինչդեռ, վերոնշյալ գույքի օտարումից ստացված եկամուտը Հայտարարագրում՝ Գ.1. «Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների եվ խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնում, չի հայտարարագրել: Հետևաբար, Տիգրան Վազգենի Սահակյանի Հայտարարագրում առկա է *ոչ ամբողջական ներկայացված տվյալ*:

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն՝ Տիգրան Վազգենի Սահակյանը 2020 թվականին «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղից ստացել է վարձակալության դիմաց վճարված գումար՝ 4,264,134.00 ՀՀ դրամի չափով, մինչդեռ Հայտարարագրում նշված եկամտի վերաբերյալ տվյալներ չի հայտարարագրել, հետևաբար, Տիգրան Վազգենի Սահակյանի Հայտարարագրում առկա է *ոչ ամբողջական ներկայացված տվյալ*:

Հայտնաբերված առերևույթ իրավախախտումների վերաբերյալ 2022 թվականի մայիսի 25-ին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ19/22 արձանագրությունը՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

Նշված առերևույթ խախտումների առնչությամբ 2022 թվականի մայիսի 25-ին Հանձնաժողովի որոշմամբ հարուցվել է թիվ N ՎԻՎ/19/22 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը, վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելուն զուգահեռ, 2022 թվականի մայիսի 25-ին հարուցվել է թիվ ԿՎ/15/2022 կարգապահական վարույթը:

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը նշանակվել է 2022 թվականի մայիսի 31-ին, ինչի կապակցությամբ Տիգրան Սահակյանը պատշաճ ծանուցվել է:

Հանձնաժողովը 2022 թվականի մայիսի 31-ին իրականացված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննության արդյունքում Տիգրան Սահակյանի նկատմամբ կայացրել է սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200,000.00 ՀՀ դրամի չափով «Վարչական տույժ կիրառելու մասին» թիվ ՎԻՎ/19/2022 որոշումը:

2. Վարույթի մասնակցի բացատրությունը.

Տիգրան Վազգենի Սահակյանը Հանձնաժողով ներկայացրած գրավոր բացատրությամբ հայտնել է, որ Հանձնաժողով ներկայացված հայտարարագրում իրեն պատկանող տան վաճառքի վերաբերյալ գործարքը նշվել է Հայտարարագրի գործարքներ բաժնում, իսկ եկամուտների բաժնում չնշելը տեխնիկական վրիպակ է:

Ինչ վերաբերում է նշված տան վարձակալության՝ «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊ ընկերությանը հանձնելու գործարքին, ապա Տիգրան Սահակյանը գրավոր բացատրությամբ հայտնել է, որ վարձակալության պայմանագիրը իր կողմից տրված համապատասխան լիազորագրով կնքվել է իր որդու՝ Վազգեն Սահակյանի և «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊ ընկերության միջև, և վերջինս, հանդիսանալով հայտարարատու պաշտոնատար անձ, նշված գործարքի և ստացված եկամուտների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացրել է իր հայտարարագրում:

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում Տիգրան Սահակյանը հաստատել է, որ 2020 թվականին «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղից ստացված վարձակալության դիմաց վճարված գումարը փոխանցվել է իր հաշվեհամարին:

3. Որոշումն ընդունելու իրավական և փաստական հիմքերը, հիմնավորումները և պատճառաբանությունը.

3.1 ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Տիգրան Վազգենի Սահակյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն հանդիսանում է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.2 Օրենքի 40-րդ հոդվածի (մինչև ՀՕ 51-Ն օրենքի 17.02.2021 թվականին ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 4-րդ մասի համաձայն՝ տարեկան հայտարարագրում ներառվում են նաև տվյալ տարվա (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ) ընթացքում հայտարարագրման ենթակա անշարժ գույք, տրանսպորտի միջոց, թանկարժեք գույք ձեռք բերելու կամ օտարելու գործարքները՝ նշելով գույքի տեսակը, ձեռք բերելու կամ օտարելու օրը, ամիսը, տարին, եղանակը, արժեքը (գինը), արժույթը, գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն:

3.3 Օրենքի (մինչև ՀՕ 51-Ն օրենքի 17.02.2021 թվականին ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 41-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետի համաձայն՝ հայտարարագրման ենթակա է Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված գույքը (նաև հայտարարագրման ոչ ենթակա) օտարելուց ստացված եկամուտը:

3.4 Օրենքի (մինչև ՀՕ 51-Ն օրենքի 17.02.2021 թվականին ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 41-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ և 13-րդ կետերի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված հետևյալ եկամուտները՝ գույքը (նաև հայտարարագրման ոչ ենթակա) օտարելուց ստացված եկամուտը, վարձակալության դիմաց ստացված վճարը կամ այլ հատուցում: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եկամուտը

հայտարարագրելիս նշվում են՝ 1) եկամտի տեսակը, 2) եկամտի ստացման աղբյուրը՝ եկամուտ վճարողի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը, հասցեն, 3) եկամտի չափը (գումարը), 4) եկամտի արժույթը:

3.5 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

3.6 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

3.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

3.8 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

3.9 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները, դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, վարչական

իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթում ***հաստատված է համարել***, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Տիգրան Սահակյանի կողմից անզգուշությամբ կատարվել են հետևյալ խախտումները.

1. Տիգրան Վազգենի Սահակյանը Հայտարարագրում «Բ.1.2 «Տվյալ տարվա ընթացքում ձեռք բերված և օտարված անշարժ գույքը» բաժնում, հայտարարագրել է ՝ հասցեում գտնվող բնակելի տան օտարման մասին տվյալ՝ 249,106,000.00 ՀՀ դրամ արժեքով, մինչդեռ, վերոնշյալ գույքի օտարումից ստացված եկամուտը Հայտարարագրում՝ «Առկա են եկամուտներ (աշխատավարձ և այլ եկամուտներ)» բաժնում, չի հայտարարագրել:

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն՝ Տիգրան Վազգենի Սահակյանը 2020 թվականին «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղից ստացել է վարձակալության դիմաց վճարված գումար՝ 4,264,134.00 ՀՀ դրամի չափով, մինչդեռ Հայտարարագրում նշված եկամտի վերաբերյալ տվյալներ չի հայտարարագրել:

Հաշվի առնելով արձանագրված խախտումների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջները, սույն գործով հաստատված փաստերից հետևում է, որ Տիգրան Սահակյանը 2020 թվականի տարեկան հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է ոչ ամբողջական տվյալներ:

Նշված արարքներով, երբ Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները ոչ ամբողջական կամ սխալ են ներկայացվում Հայտարարագրում, հայտարարատու պաշտոնատար անձը թույլ է տալիս Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված խախտում:

Հանձնաժողովն իր կողմից կայացված մի շարք որոշումներում արձանագրել է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի նպատակն է ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտել է, որ

անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Տվյալ պարագայում Տիգրան Սահակյանի կողմից ներկայացված Հայտարարագրի՝

1) «Բ.1.2 «Տվյալ տարվա ընթացքում ձեռք բերված և օտարված անշարժ գույքը» բաժնում, հայտարարագրել է ՀՀ, հասցեում գտնվող բնակելի տան օտարման մասին տվյալ՝ 249,106,000 ՀՀ դրամ արժեքով, մինչդեռ, վերոնշյալ գույքի օտարումից ստացված եկամուտը Հայտարարագրում՝ Գ.1. «Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների եվ խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնում, չի հայտարարագրել: Նշված արարքով Տիգրան Սահակյանը խախտել է Օրենքի (մինչև ՀՕ 51-Ն օրենքի 17.02.2021 թվականին ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 41-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետով և նույն հոդվածի 6-րդ մասով սահմանված պահանջները, որոնց համաձայն՝ հայտարարագիրը ներառում է եկամտի տեսակը, եկամտի ստացման աղբյուրը՝ եկամուտ վճարողի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը, հասցեն, եկամտի չափը (գումարը), եկամտի արժույթը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտել է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ Հանձնաժողովը էական է համարել խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս Հանձնաժողովը հաշվի է առել՝ արդյո՞ք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով» սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ:

Նվազ նշանակությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովն արձանագրել է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Սույն գործով Հանձնաժողովն արձանագրել է, որ Տիգրան Վազգենի Սահակյանի կողմից բնակելի տան օտարման վերաբերյալ տվյալները «Բ.2.2. Տվյալ տարվա ընթացքում ձեռք բերված և օտարված անշարժ գույքը» բաժնում ամբողջական կերպով արդեն իսկ ներկայացվել են, հետևաբար առկա են օտարված բնակելի տան գործարքի ***վերաբերյալ անհրաժեշտ տվյալները, դրանք են՝ գույքի տեսակը, ձեռք բերելու կամ օտարելու օրը, ամիսը, տարին, եղանակը, արժեքը (գինը), արժույթը, գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը***: Նշված հանգամանքը հաշվի առնելով, երբ «Գ.1. հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնում բնակելի տան օտարումից ծագած եկամտի դեպքում ենթակա են հայտարագրման եկամտի տեսակը, եկամտի ստացման աղբյուրը՝ եկամուտ վճարողի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը, եկամտի չափը (գումարը), եկամտի արժույթը, Հանձնաժողովն արձանագրում է, որ բովանդակային առումով այդ տվյալներն արդեն իսկ ներկայացվել են Հայտարարագրի են «Բ.2.2. Տվյալ տարվա ընթացքում ձեռք բերված և օտարված անշարժ գույքը» բաժնում:

Նման պայմաններում անձի տվյալ արարքով, այն է՝ Հայտարարագրի «Գ.1. հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնում բնակելի տան օտարումից ստացված եկամուտը չներկայացնելով, վնասակար հետևանք չի առաջացել:

Նշվածով պայմանավորված՝ Հանձնաժողովը տվյալ խախտումն որակել է որպես նվազ նշանկություն, ինչը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածի ուժով նշված խախտման կապակցությամբ վարչական պատասխանատվությունից ազատելու և բանավոր դիտողություն հայտարարելու հիմք է հանդիսանում:

2) ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն՝ Տիգրան Վազգենի Սահակյանը 2020 թվականին «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղից ստացել է վարձակալության դիմաց վճարված գումար՝ 4,264,134 .00 ՀՀ դրամի չափով, մինչդեռ Հայտարարագրում նշված եկամտի վերաբերյալ տվյալներ չի հայտարարագրել: Նշված արարքով Տիգրան Սահակյանը խախտել է Օրենքի (մինչև ՀՕ 51-Ն օրենքի 17.02.2021 թվականին ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 41-րդ հոդվածի 4-րդ մասի 13-րդ կետով և նույն հոդվածի 6-րդ մասով սահմանված պահանջները, որոնց համաձայն՝ ***հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված վարձակալության դիմաց ստացված վճարը կամ այլ հատուցում:***

Տիգրան Սահակյանի կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում ներկայացված՝ 31.05.2022 թվականին «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊԸ-ի տնօրենի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ ընկերությունը ներկայացրել է տեղեկատվություն, համաձայն որի, հիմք ընդունելով 12.04.2017 թվականին կնքված պայմանագիրը, ընկերությունը **2020 թվականին** Տիգրան Սահակյանին է փոխանցել **1,725,624.00 ՀՀ դրամ**, որը հանդիսացել է հունվար և փետրվար ամիսների վարձավճար:

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում Տիգրան Սահակյանը նշել է, որ 4,264,134.00 ՀՀ դրամը նշված գույքերի դիմաց ստացված վարձավճարն է, սակայն այն անհամապատասխանության վերաբերյալ, թե ինչու է նշված

գումարի չափը գերազանցում իր կողմից Հանձնաժողովին ներկայացրած տեղեկանքում արտացոլված գումարի չափին՝ 1,725,624.00 ՀՀ դրամին, Տիգրան Սահակյանը նշված անհամապատասխանության վերաբերյալ չի կարողացել ներկայացնել լրացուցիչ ապացույցներ:

Հանձնաժողովը վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության նիստը հետաձգել է մի քանի ժամով՝ ՀՀ կադաստրի կոմիտեից վարչական իրավախախտման վերաբերյալ գործին առնչվող գրությամբ տեղեկատվություն ստանալու նպատակով:

ՀՀ կադաստրի կոմիտեից նույն օրը՝ 31.05.2022 թվականին, N ՍԹ/5646-2022 գրությամբ, ստացվել է 2006-2020 թվականներին Տիգրան Սահակյանին պատկանած հետևյալ անշարժ գույքերի վերաբերյալ պայմանագրերը՝

- (անշարժ գույքի հաշվառման համարը՝) հասցեում գտնվող անշարժ գույքը վարձակալությամբ հանձնելու վերաբերյալ պայմանագիր (նոտարական ակտի կոդ՝ , այսուհետ՝ 1-ին պայմանագիր)
- (անշարժ գույքի հաշվառման համարը՝) հասցեում գտնվող անշարժ գույքը վարձակալությամբ հանձնելու վերաբերյալ պայմանագիր (նոտարական ակտի կոդ՝ , այսուհետ՝ 2-րդ պայմանագիր)
- (անշարժ գույքի հաշվառման համարը՝) հասցեում գտնվող անշարժ գույքը վարձակալությամբ հանձնելու վերաբերյալ պայմանագիրը (նոտարական ակտի կոդ՝ , այսուհետ՝ 3-րդ պայմանագիր):

Հաձնաժողովի կողմից ձեռք բերված փաստաթղթերի հետազոտությունից պարզ է դարձել, որ թվով 3 պայմանագրերով էլ սահմանված է, որ վարձակալը «Սինոհիդրո քորփորեյշն» ՍՊԸ-ն է, իսկ վարձատուն՝ Տիգրան Սահակյանը (այսուհետ՝ Կողմեր): Վերը թվարկված պայմանագրերով թվով 3 անշարժ գույքերի վերաբերյալ վարձակալության ժամկետը սահմանվել է հետևյալ կերպ՝ պայմանագրերը կնքվել են 12.04.2017 թվականին և ուժի մեջ են մտել 20.04.2017 թվականին, այսինքն՝ վարձակալության իրավունքի պետական գրանցման պահից, և գործել են մինչև մինչև 18.04.2019 թվականը:

2019 թվականի հունիսի 14-ին Կողմերի միջև կնքվել են թվով 3 համաձայնագրեր (նոտարական ակտերի կոդերն են, համապատասխանաբար՝

), վարձակալության պայմանագրերում փոփոխություններ կատարելու մասին, որոնցով անշարժ գույքերի վարձակալության ժամկետները երկարաձգվել են մինչև 01.07.2020 թվականը:

1-ին պայմանագրով վարձավճարը կազմել է 291,138.00 ՀՀ դրամ, 2-րդ պայմանագրով՝ 291,624.00 ՀՀ դրամ, իսկ 3-րդ պայմանագրով՝ 291,624.00 ՀՀ դրամ, ասինքն՝ «Սինոհիդրո քորփորեյշն» ՍՊ ընկերության կողմից թվով 3 անշարժ գույքերի վարձակալության դիմաց տրված ամսական վարձավճարի ընդհանուր գումարը կազմել է 874,386.00 ՀՀ դրամ:

ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ նշված գույքերը Տիգրան Սահակյանի կողմից օտարվել են 2020 թվականի փետրվարի 21-ին:

ՀՀ կադաստրի կոմիտեից նաև էլեկտրոնային տարբերակով ստացված տեղեկատվության համաձայն՝ ներկայացվել են փաստական հիմքեր, համաձայն որի, վարձակալի՝ «Սինոհիդրո քորփորեյշն» ՍՊ ընկերության ղեկավարի կողմից ներկայացված վարձավճարի արժեքը չի համապատասխանում ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված համապատասխան տեղեկատվությանը:

Անդրադառնալով Տիգրան Սահակյանի կողմից վկայակոչված այն հանգամանքին, որ վարձակալության պայմանագիրը իր կողմից տրված համապատասխան լիազորագրով կնքվել է իր որդու՝ Վազգեն Սահակյանի և «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊ ընկերության միջև, և վերջինս, հանդիսանալով հայտարարատու պաշտոնատար անձ, նշված գործարքի և ստացված եկամուտների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացրել է իր հայտարարագրում, ապա Հանձնաժողովն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մեկ անձի (ներկայացուցչի) կողմից ուրիշ անձի (ներկայացվողի) անունից լիազորագրի, օրենքի կամ դրա համար լիազորված պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտի վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում է անմիջականորեն ներկայացվողի համար:

Տվյալ դեպքում Հանձնաժողովն արձանագրել է, որ «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊ ընկերության հետ կնքված համապատասխան վարձակալության պայմանագիրը

քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծել ոչ թե ներկայացուցչի՝ Վազգեն Սահակյանի համար, այլ ներկայացվողի՝ Տիգրան Սահակյանի համար, ինչի մասին է վկայում նաև ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված փաստաթղթերը, որում որպես վարձատու հանդես է եկել Տիգրան Սահակյանը՝ անկախ այն հանգամանքից, որ լիազորագրով հանդես է եկել իր որդին՝ Վազգեն Սահակյանը: Հետևաբար «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղից ստացված եկամտի վերաբերյալ տվյալի հայտարարագրման պարտականությունը կրում է ոչ թե հայտարարատու պաշտոնատար անձի որդի Վազգեն Սահակյանը, այլ հենց հայտարարատու պաշտոնատար անձ Տիգրան Սահակյանը:

Այնուամենայնիվ, անդրադառնալով Տիգրան Սահակյանի այն դիրքորոշմանը, որ վերջինիս որդի Վազգեն Սահակյանը, հանդիսանալով հայտարարատու պաշտոնատար անձ, «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊ ընկերության հետ կնքված գործարքի և ստացված եկամուտների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացրել է իր հայտարարագրում, ապա ուսումնասիրելով Վազգեն Սահակյանի կողմից ներկայացված հայտարարագրերը, Հանձնաժողովն արձանագրում է, ***հաշվետու ժամանակահատվածում*** ներկայացված հայտարարագրում վերջինիս կողմից նշված գործարքի և դրանից ստացված եկամուտների վերաբերյալ տվյալներ նույնպես ներկայացված չեն:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ նաև Սահմանադրական օրենք) 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի համաձայն՝ ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում դատավորը պարտավոր է ներկայացնել գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիր «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան և այդ օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ:

Տվյալ պարագայում Տիգրան Սահակյանը Հայտարարագիրը չի ներկայացրել «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան և այդ օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ, ինչը հանդիսանում է Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով սահմանված դատավորի վարքագծի կանոնի խախտում:

Սահմանադրական օրենքի 67-րդ հոդվածի համաձայն՝ Դատավորը պարտավոր է պահպանել սույն օրենսգրքով սահմանված վարքագծի կանոնները: **Վարքագծի կանոնները**

չպահպանելը սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով կարող է հանգեցնել դատավորի կարգապահական պատասխանատվության:

Սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ դատավորին ***կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝*** դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ *դատավորի վարքագծի կանոնները խախտելը,* որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Սամանադրական օրենքի 147-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ կատարված ուսումնասիրությունների արդյունքում վարույթ հարուցած մարմինը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) ***կարգապահական վարույթը կարճելու մասին.***

2) դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին:

Սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***արարքը չի համարվում կարգապահական խախտում,*** *եթե այն, թեև ձևականորեն պարունակում է սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով* կասկածի տակ չի դնում տվյալ դատավորի համապատասխանությունը դատավորի կարգավիճակին և իր էությամբ չի կարող հեղինակազրկել դատական իշխանությունը:

Հաշվի առնելով վերոնշյալ իրավական կարգավորումները՝ Հանձնաժողովը, կարգապահական վարույթներում էական է համարում անդրադառնալ գործի նյութերով հաստատված խախտման որակական կողմին և գտնում է, որ այն պետք է գնահատման ենթարկել օրենքի ձևական և բովանդակային տեսանկյունից, որպեսզի պահպանվի *կիրառվող օրենքի և դրանով հետապնդվող նպատակի միջև անհրաժեշտ հարաբերակցությունը:*

Այս առումով, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված՝ *դատավորների կողմից ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի վերաբերյալ հաշվետվողականության ապահովման և պատասխանատվության համաչափության վերաբերյալ դրույթներին:* Այսպես, 2005 թվականին Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է Միավորված ազգերի

կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիան (ՀՀԱԳՆՊՏ 2008.02.11/9(17), որը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2007 թվականի ապրիլի 7-ին:

Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաշվի առնելով դատական իշխանության անկախությունը և կոռուպցիայի դեմ պայքարում նրա որոշիչ դերը՝ յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան և առանց դատական մարմինների անկախությանը վնասելու, պետք է միջոցներ ձեռնարկի դատական մարմինների աշխատակիցների ազնվության մեծացման ուղղությամբ և նրանց շրջանում կոռուպցիայի հնարավորությունները բացառելու համար: Այդպիսի միջոցները կարող են ներառել դատական մարմինների աշխատակիցների գործողություններին վերաբերող կանոնները:

ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակի ուղեցույցի համաձայն՝ դատավորների կողմից ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի վերաբերյալ հաշվետվողականությունը զարգացող միտում է և նպատակ ունի հասցեագրել շահերի բախման, յուրացման կամ ապօրինի հարստացման խնդիրները (տե՛ս ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակի «Հոդված 11-ի կիրառական ուղեցույց և գնահատման շրջանակ», կետ 44[1]):

Գույքային դրության վերաբերյալ ամբողջական տվյալների ներկայացումը Վենետիկի հանձնաժողովի կողմից կոռուպցիայի կանխարգելման գործում դիտարկվել է որպես արժեքավոր զենք (տե՛ս «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկյան հանձնաժողով) CDL-AD(2014)008, 24 մարտի, 2014 կարծիք No. 712 / 2013): Կարևորելով ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի վերաբերյալ հաշվետվողականությունը՝ Վենետիկի հանձնաժողովն անդրադարձել է նաև ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի հայտարարագրման պարտավորության չկատարման դեպքում ***պատասխանատվությանը և դրա համաչափությանը:*** Ըստ Վենետիկի հանձնաժողովի՝ ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի հայտարարագրման պարտավորության չկատարումը պետք է առաջացնի այնպիսի պատասխանատվություն, որը կարող է ծառայել կոռուպցիան զսպելու նպատակին: Բացառություն կարող է կիրառվել *հայտարարագրում մանր*

[1]https://www.unodc.org/res/ji/import/programmes_projects_initiatives/the_united_nations_convention_against_corruption_implementation_guide/the_united_nations_convention_against_corruption_implementation_guide.pdf

և ոչ դիտավորյալ բացթողումներ ունենալու համար, սակայն հայտարարագիր չներկայացնելը բավարար լուրջ խախտում է, և կարող է հանգեցնել պաշտոնից ազատման (Վենետիկի հանձնաժողով, CDL-AD(2015)042, 21 դեկտեմբերի, 2015 կարծիք No. 825/2015):

Հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված տեղեկատվությունը և հաշվի առնելով վերոշարադրյալ դիրքորոշումները, Տիգրան Սահակյանի կողմից Հայտարարագրում Օրենքի պահանջներին համապատասխան Տիգրան Սահակյանին պատկանած վերոնշյալ անշարժ գույքերի վարձակալության դիմաց ստացված վճարի վերաբերյալ տվյալները չներկայացնելը *հանգեցրել է դատավորի վարքագծի կանոնի՝ նյութական բաղադրիչի իմաստով բովանդակային խախտման:*

Վերոշարադրյալ փաստական և իրավական հիմքերն ու հիմնավորումները հաշվի առնելով՝ Հանձնաժողովն ընդգծում է, որ բոլոր այն դեպքերում, երբ հայտարարատու անձի կողմից Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա, մինչդեռ, հայտարարատու անձի կողմից չներկայացված տվյալներն հանգեցնում են պետական պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների պահպանման նկատմամբ հսկողության ապահովման, խախտումների հայտնաբերման, հնարավոր շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելու կամ որոշում ընդունելու դեպքերի բացահայտման իրավական հնարավորության բացակայության, ինչպես նաև *չի արտացոլում պաշտոնատար անձի իրական գույքային դրությունը*, այս առումով հայտարարագրման ենթակա տվյալները չներկայացնելու արարքը հանգեցնում է *նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը*, հետևաբար նաև՝ *դատավորի վարքագծի կանոնի՝ նյութական բաղադրիչի իմաստով բովանդակային խախտման:*

Մինչդեռ, այն դեպքերում, երբ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա կոնկրետ տվյալները, որոնք հայտարարատուի կողմից չեն ներկայացվել իր հայտարարագրի (օրինակ՝ «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում») կոնկրետ բաժնում *պահանջվող տվյալներում*, սակայն, ներկայացված է եղել գույքի հայտարարագրի «*Առկա են արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում* ընդգրկված (տվյալ պարագայում՝ արժեթղթի տեսակի, ձեռք բերելու օրվա, ամսվա, տարվա, եղանակի, արժեքի (գնի), արժույթի, գործարքի մյուս կողմի անվանման, հասցեի վերաբերյալ) *տվյալներում, որոնք բովանդակային առումով ընդգրկել են օրենքով պահանջվող*

այլ բաժնում հայտարարագրման ենթակա տվյալների շրջանակը, Հանձնաժողովի կողմից դիտարկվել են որպես նվազ նշանակություն ունեցող արարքներ: Նման հանգամանքներում էական է այն, որ կոնկրետ գործերով արձանագրված դեպքերում հայտարարագրի այլ բաժնում ներկայացված տվյալներով ապահովվում է պետական պաշտոն զբաղեցնող անձի իրական գույքային դրության վերաբերյալ հանրության տեղեկացվածությունը, որպիսի պայմաններում գործնականում չի խաթարվում ինչպես հանրային հաշվետվողականությունը, անհամատեղելիության պահանջների պահպանման նկատմամբ հսկողությունը, այնպես էլ հնարավոր շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելու կամ որոշում ընդունելու դեպքերի բացահայտման իրավական հնարավորությունը, հետևաբար նաև չի հանգեցնում *դատավորի վարքագծի կանոնի՝ նյութական բաղադրիչի իմաստով բովանդակային խախտման:*

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքներից պարզ է դառնում, որ ոչ ամբողջական ներկայացված հայտարարագրման ենթակա տվյալները, մասնավորապես՝ 2020 թվականին «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղից ստացված վարձակալության դիմաց վճարված գումարի վերաբերյալ տվյալները *բովանդակային առումով ներկայացված չեն հայտարարագրի այլ բաժիններում՝ Օրենքի այնպիսի պահանջների սահմաններում, որոնք բխում են նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունից*: Հետևաբար, պաշտոնատար անձի Հայտարարագրում 2020 թվականին «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղից ստացված եկամտի վերաբերյալ տվյալներ չներկայացնելու պատճառով բացակայում է հնարավորությունը՝ իրական և ամբողջական պատկերացում կազմելու հայտարարատու պաշտոնատար անձի իրական գույքային դրության վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոնշյալ իրավանորմերի բովանդակությունը և հիմք ընդունելով վարույթում հաստատված հանգամանքները՝ Հանձնաժողովը ***եզրահանգում է***, որ Տիգրան Սահակյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված պահանջների խախտմամբ գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիր ներկայացնելը վերը նշված դեպքերում հանգեցրել է վարքագծի կանոնների՝ *նյութական բաղադրիչի իմաստով բովանդակային խախտման*:

Սահմանադրական օրենքի 147-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարուցված կարգապահական վարույթի տևողությունը մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելը չի կարող երկու ամսից ավելի լինել:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ վարույթ հարուցած մարմինը կարճում է կարգապահական վարույթը, եթե՝

1) առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք.

2) վարույթ հարուցած նույն մարմինը նախկինում նույն արարքի համար նույն անձի նկատմամբ չի հարուցել կարգապահական վարույթ կամ կարճել է հարուցված կարգապահական վարույթը.

3) նույն արարքի համար նույն անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին նախկինում միջնորդություն է ներկայացվել Բարձրագույն դատական խորհուրդ.

4) առկա է նույն կարգապահական խախտման հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշում.

5) ***դադարեցվել կամ դադարել են դատավորի լիազորությունները:***

Բարձրագույն դատական խորհրդի կողմից 2022 թվականի հուլիսի 18-ին կայացած թիվ ԲԴԽ-70-Ո-196 որոշմամբ ***2022 թվականի հուլիսի 18-ից*** ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Տիգրան Վազգենի Սահակյանի լիազորությունները դադարել են:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 147-րդ հոդվածի 6-րդ մասի 5-րդ կետով, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Տիգրան Վազգենի Սահակյանի նկատմամբ 2022 թվականի մայիսի 25-ին հարուցված N ԿՎ/15/2022 կարգապահական վարույթը կարճել՝ դատավորի լիազորությունները դադարած լինելու հիմքով:

2. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել Տիգրան Վազգենի Սահակյանին, Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին և ՀՀ արդարադատության նախարարին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**